



ԲԱԶՄԱՎԷՊ

ՕՐԱԳԻՐ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Տ լ յ լ ե ս ա կ ա ն ե շ Բ ն ա կ ա ն

ԳԻՏԵԼԵԱՅ

ԺԲ. ՏԱՐԻ. ԹԻԻ 12.

1854

ՅՈՒՆԻՍԻ 15.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԲՆՈՒԹԻՆ

Հրահանգ, Զրուանք և Սփոխանք հասարակաց : (Տես երես 116)

Քանի քանի խոցուած սրտեր այս պիսի միայնութեանց մէջ իրենց կեանքը գտած են, և միայն հոն և ոչ ուրիշ տեղ : Քանիներ իրենց հայրենեաց, ընտանեաց և սիրելեաց սէրն ու կարօտն մէկ ձեռատունկ ծառով մը, կամ պարտէզ մը հոգալով, կամ բնութեան տեսարանները դիտելով՝ առած կ'ապրին : Տանդէ Խտալացւոց առաջին բանաստեղծն և քաջ քաղաքագէտ, իր ծաղկած և սիրուն Ֆիորենցայ հայրենիքէն բշտուած, և երկար տարիներ կարօտը քաշելով, երբոր հրաւերք ընդու-

նեցաւ նորէն դառնալու, բայց անանկ պայմաններով՝ որ իր հայրենեացը պատիւ չէր սեպեր, թէպէտ և կը հալէր Ֆիորենցայի փափագով, բայց մերժեց չառաւ յանձն մտնել իր սիրոյ սահմաններն, և ըսաւ. « Եթէ ամէն տեղ ինծի համար արեւը չի ծագեր. միթէ հոս ալ չկայ ինծի բաց և պայծառ օդ մը, և բնութեան սփոփանք » :

Երբանիկ թշուառք, (վասն զի չեմ գիտեր ուրիշ ինչ ըսել այսպիսեաց) որ իրենց զրկմանց և աքսորանաց մէջ ալ կրնան վայելել զբնութիւն, որով և

սփոփանք գտնել : Սիպերիոյ սառաման-
նիքն ալ ունին իրենց սրտաշարժ տե-
սարաններն , որով դեռ մարդ կ'ապրի
կը զբօսնու և կը սփոփի այնչափ ցըր-
տութեանց մէջ ալ : Վեռ երնեկ անոնց
ալ , որ իրենց արգելանին մէջ ալ գոնէ
անարգել պատուհան մը ունին , ուսկից
թէ որ նախանձոտ երկիրս ալ չէ՝ գոնէ
աննախանձ և ազատ երկիրքը կը տես-
նեն , և բնութեան օղային և լուսաւոր
տեսարանները : Արանի ան մարդուն
որ պատուհան մը ունի՝ ուսկից անպատ
անպարիսպ բնական հորիզոն մը կը
տեսնէ , թէ ցամաքի թէ ծովու . գու-
ցէ իր թշուառութեան մէջ ալ՝ զինքը
թշուառացընողէն աւելի ընդարձակ և
գեղեցիկ տեսարան մը կը վայել : Այն
տեսարանը կամաց կամաց իր կորուստ-
ներուն տոյժը կը վաւարէ . և վերքերուն
սպեղանիք կ'ըլլայ : — Բոնօք Սպա-
նիացի ասպետ մը ելեր վանք մը գացեր
էր պտրտելու , տեսնելու . եկաւ արգե-
լական ծերու մը սենեակ , որ գրեթէ
բանտ կը նմանէր , և շատ բանտէ ալ
անմխիթար . վասն զի պատուհանին
դիմաց պատ մը բարձրացած էր , որ ա-
մէն տեսարան կը խափանէր . զարմա-
ցաւ մնաց երիտասարդն երբոր իմացաւ
որ ծերը շատ տարի այն խուցէն դուրս
ելած չէ , ուրիշ տեսարան տեսած չէ .
և հարցուց թէ ինչպէս կրնայ ապրիլ
այնպէս անմխիթար առանց բան մը
տեսնելու : Այն ատեն ծերը ցըցուց ,
որ դիմացի պատին վրայ լայն ճեղք մը
կար , այն ճեղքէն երկինք ափ մը կ'ե-
րևար , և արևը ամէն օր այն ափ մը
երկնքին վրայէն վայրկեան մը կ'անցը-
նէր . գիշերն ալ քանի մը աստղ կը ցո-
լացընէր այն կտորին վրայ , և երբեմն
լուսնէն բարեբար ճառագայթ մը , (որ
միշտ մենասիրաց սփոփանքն են) ին-
չուան այն ճեղքէն ալ կ'անցընէր և ծե-
րուն փակեալ խցին ալ այցելութեան
կու գար : Այն ափ մը երկինքն , այն
դողդղուն և դեղնած ճառագայթն էր
ծերուն ոչ միայն երկրաւոր սփոփանքն ,
հապա նաև ուժ տուողն՝ ուրիշ ամէն
զրկմունք յանձն առնելու , երկնաւոր

զբօսանաց յուսով : — Արնէկ ուրեմն
ափ մը ազատ երկնքի տեսքը և այցա-
րար ճառագայթ մ'ալ վայրդներուն :
Ափսոս անոնց միայն՝ որ այն ափէն և
այն լուսոյ թրթումներէն ալ զրկուած
են . և անէծք մարդկային կրից և ան-
գթութեան՝ որ իրենց նմանիքը կը
զրկեն բնութեան տեսարաններէ և
կը դատապարտեն ի մթութիւն : . . .
Բնութեան այն ահալ արդարութիւնն
անգամ՝ ամենէն յետին պատուհաս
սահմանեց զխաւարն արտաքին . բայց
միայն անզեղձից պատուհաս հանդեր-
ձեալ : Ով մարդիկ , դուք մի զրկէք
մէկգմէկ երկրիս վրայ՝ անոր գեղեցիկ
լուսէն , որ իր առաջին և վերջին բա-
րեքն ալ է . անոր համար ծնողը ի լոյս
կը բանայ աչուրները , մեռնողն կը գոցէ
զաչուրները ի լուսոյ : Ամանեցէք ձեր
արդար և անաչառ տիրոջը և հօր՝ որ
“ Օ արեգակն իւր ծագէ ի վերայ չա-
րաց և բարեաց , և ածէ անձրև ի
վերայ արդարոց և մեղաւորաց ” :
Ինչպեցէք ձեր նմանին , ինչպեցէք ձեր
սրտակցին , և մի զրկէք զայն բոլորովին
արտաքին բնութեան , որ չըլլայ թէ
իր ներքին բնութեան օրէնքն՝ իր մարդ-
կութիւնն ալ մոռնայ : Թողէք թշուա-
ռին իր ազատ պատուհանիկը , թողէք
իր լուսամուտը , իր սփոփանքը . . .

Իսկ դու բարեկամ որ ինչուան հիմա
այս երկար խօսքերուս լռիկ կը լսես ,
դու ինչէն տխրած ես , չեմ հարցընէր .
բայց եթէ տրտմութեանդ սփոփանք կը
փնտռես , և ուրիշ կերպով չես գտնէր ,
եւ բնութեան մէջ . “ Ի՞նչ կամիցիս
սթափել , կ'ըսէ Սկեբերան մը ,
թէ կամիցիս սթափել՝ երթ ի բու-
րաստանս ուրեք , ուր աղբիւրք բղխի
ցեն և վտակք գետոց խաղայցեն , և
ի ծովալիճս , և միտ դիր ծաղիւ-
ցացն , և լսիցես զգեղեցիկ երգս ձալ-
ուանցն ” : Օ այս խրատս կու տայ
տրտմելոց այն անձն՝ որ վարդապետ
արտասուաց կ'ըսուէր : Ի՛նչ ով ցաւած
սիրտ , եւ ով խոց ու վիրաւոր , եւ ու պօր
տէ մէկ մը բնութեան մէջ . ինչ ցաւ
ունիս , որուն գեղը հոս չգտնուի : Ինչ

ցըցուր այդ սիրտդ՝ սա երեկոյեան ա-
րևուն որ իր օրուան ճամբորդութենէն
վերջը՝ ահա կարմիր արեաց մէջ կը ծած-
կուի . տես , անկէ զուարթ և հանդարտ
ինչ կայ . ահա ծածկուեցաւ ջրոց և
բլրոց մէջ , բայց վաղը դարձեալ կու
գայ զքեզ միտիթարելու : — Տես երեկոյ-
եան թռչնիկը , որ դա ծառին մէջ պա-
հուրտած իր չափէն վեր ձայն մը ձգած՝
հովիտ ու ձոր կը խօսեցընէ . հարցուր
մէկ մը անոր , հարցուր մանաւանդ քու
սրտիդ , ինչ կ'երգէ , ինչ կ'ըսէ այն բնու-
թեան միայնութեանց մէջ : . . . Ար-
տեսնանա՞ս ոտքիդ քով խոնարհած փա-
կուած մանուշակը , որուն հազիւ բա-
րակ հոտը կը զգաս , որուն համար այս
գիշերուան ցօղիկս կը ծծէ , և որուն
համար ամէն առտու կը բանայ իր կա-
պոյտ աչուրները լուսոյ դէմ : — Տես
դա խառնուածիկ ու բարձրացողուն ծաղի-
կը , որուն նայիլ հրամմեց մեզի իր և
մեր ստեղծողն . « Հայեցարուք 'ի շու-
շանն վայրենի » . ո՞վ արդեօք ատոր նը-
ման հարուստ հագուած է , արդեօք
մեծն այն և ամենահարուստ Սողոմոնն ,
որ պարծենալով մը կ'ըսէր . « Աչք հայե-
ցարուք 'ի Սողոմոն , 'ի պսակն ' որով
, պսակեաց զնա մայր իւր յաւուր փե-
, սայութեան իւրոյ և յաւուր ուրա-
, խութեան սրտի իւրոյ » . (Աբգ .)
տես այդ պսակը և այդ զարդերը , և
երբոր աչքդ այն մեծ թագաւորին փա-
ռօքն ու սարօքն շնանայ , դարձուր ու
նայէ . « Ի շուշանն վայրենի » , ո՞վ աւե-
լի գեղեցիկ է . Բստուած կը փութայ
պատասխան տալու . « Բսեմ ձեզ , զի և
, ոչ Սողոմոն յամենայն 'ի փառսն իւ-
, րում զգեցաւ իբրեւ զմի 'ի նոցանէ » :
Հարցուր դու ալ Բստուծոյ . Ինչո՞ւ այդ
վայրենի ծաղկիդ « որ այսօր է և վա-
ղիլ 'ի հնոց արկանի » , ինչո՞ւ այդչափ
գեղեցկութիւն տուած ես . — Արպէս
զի իմանաս , ո՞վ թերահաւատ , որ եթէ
Բստուած այդ վայրի առօրեայ խոտիդ
այդչափ զարդ կու տայ , որչափ բան պա-
տաստած է քու սրտիդ՝ որ յաւիտեան
պիտի մնայ : Հիմայ քու արցունքներդ
գիշերուան ցօղէն առաջ՝ կ'ինկնան այդ

ծաղկին վրայ . բայց սրբէ՛ ու վեր նայէ .
ինչ են այդ փայլուն թաւշի նման գի-
շերուան վարագուրին վրայ բանուած
բիւրաւոր գոհարներն . ահ , ինչ են
այն անթիւ աստղերն , և ո՞ւր կ'երթան
այդ անհատնում երկնքին մէջ . դեռ
չի յոգնեցան այդչափ ճամբէ . — Հէ ,
վասն զի քու կոտրած սրտիդ սպեղանիք
մ'ալ պիտի կաթեն իրենց շողերովը :
— Հապա այդ լուսնակն՝ որ բոլոր լու-
սաւորաց սահմանը թողած , քեզի մո-
տեցած , արծաթէ ճառագայթները չորս
դին սփռած է , սրտիդ վրայ խաղաղութի
մը չի ծագեր : — Տես դա ընդարձակ
ծովուն երեսը որուն եզերքը չեն երևար ,
ինչ է այդ անդադար շարժումը , ինչ է
այդ հովը՝ որ չի զատուիր անկէ . ինչ
են այդ ալիքներն՝ երբեմն խռոված և
երբեմն խաղաղած . եղած է սիրտ՝ որ
զգայ ու երբեք չխուլի . կամ եղած է
խռովութիւն՝ որ երբեք չդադրի : —
Տես սա ծովափունքս , ինչպէս հանդարտ
կէս քուն կէս արթուն կ'երեբան , ինչ-
պէս լուսնին լոյսը վրանին ոսկեթել
զգեստի մը պէս տարածուած և ծալ
ծալ կը շարժի . այս գեղեցիկ լուսափայլ
պատկերիս մէջ՝ դու քու փափագածներդ
չես տեսներ . . . Բայց այդ պայծառ
սահմանէն անդին՝ ինչ է այդ սևու-
թիւնը ծովուն վրայ , ծանծաղէն է թէ
ամպէն է՝ որ լոյսը ծածկեր և մթնո-
ցուցեր է . ո՞հ , այդ սևութիւնդ չէ՞ որ
քու ներկայիդ ալ պատկերն է , քու կո-
րուստներդ , քու չգտածներդ , քու ցա-
ւերդ յիշեցընելով . . . Ի՞նչ , բռնու-
թիւն , նախանձ , տգիտութիւն և տը-
մարդութիւն , ասոնք չեն որ քու սիրե-
լիներդ , քու յոյսերդ , քու դալար զօ-
րութիւններդ յափշտակեցին . . . Ի՞նչ
վհատիր . ելիր կայնէ , տես անդին , աւե-
լի անդին , այն ծովուն սև սահմանէն
անդին , ինչ կը տեսնես . . . Բ՛հ դար-
ձեալ լուսաւոր սահման մը , ուսկից ան-
դին ալ սահման չերևար . ծովուն և եր-
կնքին ծայրերը իրարու կպած են , լուս-
նին լոյսը ձորի պէս մէջերնին դիզուած ,
ուր կ'ընկղմի քու աչքիդ լոյսն ալ . . .
Բարեկամ , այդ հեռաւոր լուսալիր սահ-

մանր , ուսկից անդին ալ մթուծիւն չկայ , ինչ կ'ըսէ ատիկայ քու սրտիդ . այդ չէ՞ քու ապագայիդ նմանօրինակ պատկերը . այդ քու հանդերձեալդ չէ՞ , որ յետ անցեալ ուրախութեանց և ներկայ փորձանաց՝ բեզի դարձեալ խոստացուած է . անկորուստ գիւտ մը , քու ամէն ունեցած և փափագած բարեացդ , որոնց համար հիմա այդ վշտացեալ սիրտդ կը նետուի ու կը նետուի : . . .

Ով ընթերցող , ինչուան հոս լսեցի ես բնութեան ձայնը . ականջքս լռեցին , և դեռ ձայն մը սրտիս մէջ կը խօսէր . խոր էր սիրտս ծովուն պէս , խաղաղ էր վրան ծածած լուսոյն պէս . գլուխս դէպ 'ի ծոցս խոնարհած էր , աչուրներս թաշկինակով բռնուած էին . և երբոր սրբելով նորէն բացի , (չեմ գիտեր քանի պահէ ետեւ ,) ահա քովս ոչ ծեր կար և ոչ ծով . այլ միայն այս թղթեայ ծովակս , քանի մը արտասուաց կաթիլներով ուռած . զորոնք կամաց կամաց կը ցամքեցընէր բնութեան մտածմունքը , խոստանալով ինծի և նմանեացս՝ օգտակար և առձեռն պատրաստ հրահանգ մը , Օքօսանք մը և Սփոփանք մը :

Հ. Ղ. ԱԼ.

Օգայուն հոգիք ամէն տեղ սիրելի առարկայ մը կը փնտռեն , որ անփոփոխելի ըլլայ . կարծեն որ գրքի մէջ կըրնան գտնալ . բայց ես կարծեմ որ աւելի լաւ կ'ըլլայ որ բնութեան ետեւ ըլլան , որ մեզի պէս միշտ կը փոխուի : Բնելի վսեմ գիրքը մեր միտքը մէկ մեռած հեղինակ մը կը բերէ . իսկ աւելի խեղճ տունկ մը մէկ միշտ կենդանի հեղինակ մը մեզի կը ցուցընէ . ուր թողունք որ , մարդուս ձեռքէն ելած լաւագոյն գործք մը կրնայ երբեք հաւասարիլ այն գործքին որ Բստուծոյ ամենակարողութեանէն կ'ելլայ : Բրուեստը կրնայ հազարաւոր լուսնալիւսներ ու Սիրելիներ հանել , բայց բնութիւնն է միայն որ հազարաւոր նոր տեսարաններ կը ստեղծէ Լարոպա , Լիբիկէ , Հնդկաս-

տան , ու երկու աշխարհքին մէջ : Բրուեստը մեզ ետեւէն կը հասցընէ անցած բան մը որ չկայ , իսկ բնութիւնը մեզի հետ առջեւէն կը քալէ , և զմեզ ապագայի մը կը հասցընէ որ դէպ 'ի մեզ կու գայ : Ուրեմն բնութեանը նման թողունք զմեզ որ ժամանակին ընթացքովը առաջ երթայ . և մեր զուարճութիւնը փնտրուենք ջրերու , հովիտներու , անտառներու մէջ , երկնից վերայ , ու ան փոփոխութեանց մէջ որ դարերը կը գործեն : Սեր թառամեալ ծերութեան ատենը մեր նայուածքը և մեր սրտին ցաւը չենք դարձընէր մեր անցաւոր երիտասարդութեանը վրայ , այլ Բստուծոյ պաշտպանութեանը տակ կը ուրախութեամբ առաջ կ'երթանք դէպ 'ի ան օրերն որ յաւիտենական պիտի ըլլան : Բնութեանը քննութիւնը այնպէս ընդարձակ է , որ ամենայն տեղայ կրնայ բան գտնալ որով իր առանձին տաղանդը ընդարձակէ : Սրեն որ Բնուիլ դպրոցին մէջ ուրիշ բան այնչափ չէր կարգար որչափ Սիրելիներուն մէջ Լանթասայ Զանապարհորդութիւնը . և ինքն ալ աղուոր Զանապարհորդարան մը շինեց : . . .

Բայց բնութիւնը մարդուս առջևը Լանթասանէն աւելի ընդարձակ բանաստեղծութիւն մը կը բերէ . թող ամէն տղայ իրեն բնաւորութեանը յարմար բնութիւնը քննէ . միշտ ընկերութեան օգուտ մը անկէց առաջ կու գայ : Սարգադետին մը անոնց բաւական է . բազմաթեթ գիրք մ'է . տնկաբանը անոր մէջ կարգեր կը գտնայ . բժիշկը բժշկական տունկեր . նկարիչը ծաղկէ պլաստիկներ . բանաստեղծը ներդաշնակութիւն . պատերազմականը պատերազմի դաշտ մը . զգայուն սիրտ ունեցողը հանգիւտ տեղ մը , գեղացին խոտի շէղջեր . բայց թէ որ ամէնն ալ ծաղկի փունջեր որ հոն տեսնալու ըլլան , թող որ անով իրենց մանկահասակ ընկերները զարդարեն . մանկութեան անմեղ խաղերը աւելի լաւ են , քան թէ մարդկանց աշխատալի և նախանձոտ ուսմունքը :

Պետկարտէն տը Սենթիէն :